

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2015 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	Կետը	Միջոցառման անվանումը	Միջոցառումների կատարման արդյունքները
1	2	3	4
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	68.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 4-ի № 587-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Մշակվել և սահմանված կարգով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015 թվականի փետրվարի 13-ի № 1/06/180-15 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 4-ի № 587-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Ներկայացված որոշման նախագիծը ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել (ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 10-ի № 238-Ն որոշում):
	69.	«Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ գույքով ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Մշակվել և սահմանված կարգով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015 թվականի մայիսի 8-ի № 1/05/593-15 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ գույքով ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել (ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի № 559-Ա որոշում):
	70.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 1-ի № 1428-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ	Մշակվել և սահմանված կարգով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015 թվականի մարտի 23-ի № 1/05/391-15 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 1-ի № 1428-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Որոշման լրամշակված

		կառավարություն ներկայացնելը	տարբերակը ՀՀ կառավարություն է ներկայացվել 2015 թվականի ապրիլի 17-ի № 1/05/437-15 գրությամբ: Որոշման նախագիծը ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել (ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի № 1114-Ն որոշում):
	71.	«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների և ղեկավար անձնակազմի պաշտոնային դրույքաչափերի ու հավելավճարների վճարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	<p>Մշակվել և սահմանված կարգով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015 թվականի ապրիլի 20-ի № 1/05/526-15 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների և ղեկավար անձնակազմի պաշտոնային դրույքաչափերի ու հավելավճարների վճարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Որոշման լրամշակված տարբերակը ՀՀ կառավարություն է ներկայացվել 2015 թվականի հուլիսի 2-ի № 1/05/864-15 գրությամբ:</p> <p>Որոշման նախագիծը ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել (ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 15-ի № 798-Ն որոշում):</p>
	72.	«Երիտասարդական աշխատողի ինստիտուտի կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	<p>Մշակվել և սահմանված կարգով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015 թվականի նոյեմբերի 27-ի № 1/07/1502-15 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Երիտասարդական աշխատողի ինստիտուտի կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որը հետագայում լրամշակվել է որպես ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ: Արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել (ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի № 56 արձանագրային որոշում):</p>
ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրը	Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը

<p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p>	<p>39.</p>	<p>Երիտասարդական քաղաքականության մասնակցային գործընթացի խթանում և զարգացում</p>	<p>1. Երիտասարդական աշխատողի վերապատրաստման ծրագրի մշակման նպատակով 2015 թվականի հունվար-մարտ ամիսներին ուսումնասիրվել են ԱՊՀ անդամ և եվրոպական երկրներում երիտասարդական աշխատողի ինստիտուտի արդյունավետ կիրարկման մեխանիզմները, ինչպես նաև երիտասարդական աշխատողի պատրաստման և վերապատրաստման ծրագրերը:</p> <p>2015 թվականի հունիս-օգոստոս ամիսներին իրականացվել է «Երիտասարդական աշխատողի և աշխատանքի մասին հետազոտություն» ծրագիրը: Ծրագիրը նպատակ ուներ պարզելու՝</p> <ol style="list-style-type: none"> 1) երիտասարդական աշխատանքի նպատակները, խնդիրները, գործառույթները և գործունեության հիմնական ոլորտները. 2) երիտասարդական աշխատողի ուսուցման մոդելները, ծրագրերը. 3) երիտասարդական աշխատողի որակավորման (մասնագիտական և էթիկական) պահանջները, ինչպես նաև դրանց գնահատման գործիքները. 4) երիտասարդական աշխատողի կարգավիճակը, աշխատանքի և մասնագիտության ճանաչելիությունը. 5) երիտասարդական աշխատանքի գործունեության մեթոդաբանությունները (հավասարը հավասարին, շարունակական կրթություն, մեծահասակների կրթություն և այլն) հիմնական գործողությունների բնույթը. 6) երիտասարդական աշխատանքի իրավական հիմքերը. 7) երիտասարդական աշխատանքի որակի չափանիշները. 8) երիտասարդական աշխատանքի ֆինանսավորման հնարավորությունները և ծավալը. 9) երիտասարդական աշխատողի հիմնական խմբերը և նրանց բնութագրիչները. 10) երիտասարդական աշխատանքի ինստիտուտի կայացման համար իրավական, նյութատեխնիկական և մտավոր կարիքները: <p>Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության պետական երիտասարդական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգի միջոցով «Թրեյներների ազգային թիմ» հասարակական կազմակերպության կողմից 2015 թվականին իրականացվել է «Երիտասարդական աշխատանքի կայացումը Հայաստանում. մարտահրավերներ և հնարավորություններ» ծրագիրը:</p>
---	------------	---	--

		<p>Ծրագրի խնդիրներն էին՝ Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալացման համակարգային զարգացման խոչընդոտների սահմանումը, միջազգային փորձի ուսումնասիրությունն ու տեղայնացումը և Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական աշխատանքի զարգացման տարբերակների մշակումը:</p> <p>Ծրագիրը նախատեսում էր միջազգային փորձի ուսումնասիրություն այլ երկրների փորձագետների հետ միասին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական աշխատանքի զարգացման և ճանաչելիության տարբերակների մշակում:</p> <p>Միջազգային փորձի ուսումնասիրությունն իրականացվել է երկրորդային փաստաթղթերի հետազոտության միջոցով: Հետազոտողների թիմը ուսումնասիրել է աշխարհի տարբեր երկրներում երիտասարդական աշխատանքի վերաբերյալ գոյություն ունեցող փաստաթղթերը և ծրագրերը: Տեղի փորձագետները համագործակցել են երեք երկրների փորձագետների հետ՝ Վրաստանի՝ որպես Հայաստանին մոտ պատմական և աշխարհագրական նախապայմաններով երկիր, Ռուսաստանի՝ որպես խորհրդային ժառանգությամբ երկիր և մեկ այլ՝ Եվրոպական միության երկիր՝ որպես Հայաստանից տարբերվող պատմական, տնտեսական և մշակութային նախապայմաններով երկիր:</p> <p>Ուսումնասիրվել է Սինգապուրի Հանրապետության, Բելգիայի Թագավորության, Լիտվայի Հանրապետության, Կանադայի, Ֆինլանդիայի Հանրապետության և Դանիայի Թագավորության երիտասարդական աշխատանքի և աշխատողի փորձը, գործող մեխանիզմները:</p> <p>Ամբողջ ծրագրի արդյունքները ամփոփվել և տեղ են գտել «Հայաստանում երիտասարդական աշխատանքի զարգացման հեռանկարները» թեմայով ավարտական զեկույցում:</p> <p>Երիտասարդական աշխատողի վերապատրաստման ծրագիրը և ուսումնական ուղեցույցը մշակելու նպատակով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 18-ի № 203-Ա/1 հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, և հաստատվել է խմբի անհատական կազմը: Աշխատանքային խմբի կազմում ընդգրկվել են երիտասարդական աշխատանքի բնագավառում ակտիվ գործունեություն ծավալող երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:</p> <p>Մշակվել և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի</p>
--	--	---

		<p>2015 թվականի դեկտեմբերի 29-ի № 301-Ա/1 հրամանով հաստատվել է երիտասարդական աշխատողի վերապատրաստման ծրագիրը:</p> <p>2. Պատրաստվել և www.erit.am կայքում հրապարակվել է երիտասարդական աշխատողի պատրաստման և վերապատրաստման ուսումնական ուղեցույցը:</p> <p>3. Երիտասարդության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, պետական մարմինների վերապատրաստման նպատակով իրականացվել են՝</p> <ul style="list-style-type: none">• «Ուսուցման կազմակերպում՝ ուղղված երիտասարդական հասարակական կազմակերպությունների կարողությունների և հմտությունների զարգացմանը» ծրագիրը: Ծրագրի նպատակն էր խթանել Հայաստանի Հանրապետությունում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների գործունեությունը և զարգացնել հասարակական կազմակերպությունների կարողություններն ու հմտությունները: 2015 թվականի դեկտեմբերի 10-11-ը Երևան քաղաքում կազմակերպվել է ուսուցում երիտասարդական հասարակական կազմակերպությունների համար, որին մասնակցել են հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ Երևան քաղաքից և Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերից (60 մասնակից): Մասնակիցներին ներկայացվել են ծրագիր գրելու հմտությունները, եղանակները, արդյունավետ և սահմանված չափանիշներին համապատասխան դրամաշնորհային ծրագրերի հայտերի մշակման և ներկայացման ձևերը, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգը, համակարգի միջոցով հասարակական կազմակերպություններին դրամաշնորհների տրամադրման կարգը, նրանում կատարված փոփոխությունները: Մանրամասն տեղեկատվություն է տրամադրվել դրամաշնորհային ծրագրերի բյուջեների կազմման, նախահաշիվների ձևի, գնային չափորոշիչների, ինչպես նաև հաշվետվությունների ճիշտ կազմման ու ներկայացման կարգի մասին:• «Առցանց համակարգով ներկայացված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննությունն իրականացնող փորձագետների վերապատրաստում» ծրագիրը: Ծրագրի նպատակն էր համակարգում ընդգրկված փորձագետներին ուսուցանել համակարգի հետ աշխատանքի
--	--	---

		<p>սկզբունքները. 2015 թվականի դեկտեմբերի 14-15-ը Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում անցկացվել է առցանց համակարգով ներկայացված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննությունն իրականացնող փորձագետների վերապատրաստում: Փորձագետներին ներկայացվել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից երիտասարդական հասարակական կազմակերպություններին դրամաշնորհների տրամադրման կարգում կատարված փոփոխությունները, փորձագետների ատեստավորման կարգն ու պայմանները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի № 1693 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի նիստի № 54 արձանագրության 33-րդ որոշմամբ հավանություն ստացած Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը:</p> <p>Քննարկման ընթացքում վեր են հանվել առցանց համակարգում առկա խնդիրները, դրանց լուծման տարբերակներն ու ուղիները:</p> <ul style="list-style-type: none">• «Մեթոդական աջակցություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հասարակական կազմակերպություններին և երիտասարդներին» ծրագիրը: 2015 թվականի դեկտեմբերի 4-5-ը Երևան քաղաքում կազմակերպվել է սեմինար, որի ընթացքում մեթոդական, ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն է ցուցաբերել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական քաղաքականության ոլորտի համապատասխան աշխատակիցներին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործող երիտասարդական հասարակական կազմակերպություններին, երիտասարդներին: Մասնակիցների ընդհանուր թիվը՝ 34: Սեմինարի մասնակիցներին ներկայացվել են Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականությունը, ոլորտում գործող իրավական ակտերը, երիտասարդության ոլորտում միջպետական, միջազգային երիտասարդական համագործակցության զարգացմանն ուղղված ծրագրերը: Անդրադարձ է կատարվել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգին: Դասընթացավարները
--	--	--

		<p>ներկայացրել են ծրագիր գրելու հմտությունները, արդյունավետ և սահմանված չափանիշներին համապատասխան դրամաշնորհային ծրագրերի հայտերի մշակման և ներկայացման ձևերը: Մանրամասն տեղեկատվություն է տրամադրվել դրամաշնորհային ծրագրերի բյուջեների կազմման, նախահաշիվների ձևի, գնային չափորոշիչների, ինչպես նաև հաշվետվությունների ճիշտ կազմման ու ներկայացման մասին:</p>
40.	<p>Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորում</p>	<p>Գերակա խնդրի իրականացման համար 2015 թվականի 1-ին կիսամյակում մշակվել և կազմվել էին «Սպորտլանդիա-2015» զանգվածային մարզական միջոցառման ծրագրերը, որոնք ուղարկվել էին ՀՀ մարզպետարաններ և ԼՂՀ կառավարության առընթեր սպորտի պետական կոմիտե: «Սպորտլանդիա-2015» զանգվածային մարզական միջոցառումն իրականացվել է 3 փուլով. 1-ին փուլ՝ ներնախադպրոցական և ներդպրոցական, 2-րդ փուլ՝ համայնքային և 3-րդ փուլ՝ մարզային: Ծրագրում ընդգրկված են վեց խաղային մրցաձևեր:</p> <p>«Սպորտլանդիա-2015» զանգվածային մարզական միջոցառումն իրականացվել է ՀՀ մարզերի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախադպրոցական տարիքի երեխաների և դպրոցական 5-6-րդ դասարանների աշակերտների շրջանում: Ծրագրի կանոնակարգով նախատեսված ժամանակամիջոցում ՀՀ մարզպետարաններից և ԼՂՀ-ից ստացվել են «Սպորտլանդիա-2015» զանգվածային մարզական միջոցառման անցկացման հաշվետվությունները, որոնցում ներկայացված է համայնքային և մարզային փուլերում միջոցառմանը մասնակցած նախադպրոցական հիմնարկների և դպրոցների, ինչպես նաև մասնակից երեխաների թիվը: 2015 թվականի հուլիսի 1-ի դրությամբ նախադպրոցական հիմնարկներում «Սպորտլանդիա-2015» մարզական զանգվածային միջոցառմանը մասնակցել են՝ համայնքային փուլում 195 նախադպրոցական հիմնարկ, 2340 երեխա, մարզային փուլում՝ 26 նախադպրոցական հիմնարկ, 312 երեխա, իսկ հանրակրթական դպրոցների 5-6-րդ դասարանների աշակերտների շրջանում միջոցառմանը մասնակցել են՝ համայնքային փուլում 141 դպրոց, 1692 աշակերտ, իսկ մարզային փուլում՝ 16 դպրոց, 192 աշակերտ: Միջոցառմանը ընդհանուր առմամբ մասնակցել են 4536 նախադպրոցական տարիքի երեխաներ և աշակերտներ:</p> <p>Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների շրջանում անցկացվող «Սպորտլանդիա-2015» մարզական զանգվածային միջոցառումը Հայաստանի Հանրապետության Նախագահի 2015</p>

		<p>թվականի հունիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի մայիսի 20-ի ՆԿ-113-Ն կարգադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՆԿ-83-Ն կարգադրությամբ անվանափոխվեց՝ դառնալով «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթ, ինչպես նաև հիմնվեց ՀՀ Նախագահի համանուն մրցանակ:</p> <p>2015 թ. սեպտեմբերին անցկացվեց մրցույթի առաջին՝ համայնքային փուլը, որին մասնակցել են ՀՀ մարզերի և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի 232 նախադպրոցական հիմնարկ, 2784 երեխա: Միջոցառման երկրորդ՝ մարզային փուլն անցկացվել է հոկտեմբերի 1-12-ը, իսկ երրորդ՝ եզրափակիչ փուլն անցկացվել է հոկտեմբերի 20-21-ը Երևան քաղաքում՝ ՀՀ ֆինանսների նախարարության մարզահամալիրում: Եզրափակիչ փուլին մասնակցել են մարզային փուլում և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքային փուլում հաղթած նախադպրոցական հիմնարկները (11 նախադպրոցական հիմնարկ, 110 երեխա): Մրցույթի հաղթող ճանաչվեց Շիրակի մարզի Ախուրյանի նախադպրոցական հիմնարկը, 2-րդ մրցանակային տեղը զբաղեցրեց Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի № 13 նախադպրոցական հիմնարկը, իսկ երրորդ տեղը զբաղեցրեց Գեղարքունիքի մարզի Գավառի № 7 նախադպրոցական հիմնարկը: Մրցանակային տեղեր զբաղեցրած նախադպրոցական հիմնարկները պարգևատրվել են համապատասխանաբար՝ 1-ին տեղը ՀՀ Նախագահի վկայագրով, 550.000 դրամ մրցանակով և գավաթով, 2-րդ տեղը զբաղեցրած նախադպրոցական հիմնարկը պարգևատրվել է ՀՀ Նախագահի վկայագրով, 450.000 դրամ մրցանակով և համապատասխան կարգի գավաթով և 3-րդ տեղը զբաղեցրած նախադպրոցական հիմնարկը պարգևատրվել է ՀՀ Նախագահի վկայագրով, 350.000 դրամ մրցանակով և համապատասխան կարգի գավաթով, ինչպես նաև մասնակից բոլոր երեխաներին տրվել է մարզահագուստ, իսկ 4-11-րդ տեղերը զբաղեցրած նախադպրոցական հիմնարկներին հատկացվել են մարմնամարզական ներքնարկներ՝ որպես մարզագույք:</p> <p>Մինչև 2015 թվականի օգոստոս ամիսը ծրագիրն իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ չարգելված աղբյուրների հաշվին, իսկ 2015 թ. սեպտեմբեր ամսից միջոցառումը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեի հաշվին:</p>
--	--	--